Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

‹‹Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականի դասավանդման հմտությունների զարգացման ապահովում›› ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ <<Ոսկեվանի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Թեմա՝ << Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում>>

Մենթոր՝ Նաիրա Անանյան

Ուսուցիչ՝ Սարգյուլ Պետրոսյան

Բովանդակություն

1. Ներածություն----------3
2. Բուլինգի սահմանումները և տեսակները----------6
   2.1 Ի՞նչ է բուլինգը
   2.2 Բուլինգի տեսակները
3. Բուլինգի պատճառները----------9
4. Գրական ակնարկ----------12
5. Բաց դասի պլան- վերլուծություն ----------15
6. Եզրակացություն----------19
7. Առաջարկություն ----------20
8. Օգտագործված գրականության ցանկ----------22

Ներածություն

<<Բռնությունից զերծ մնալու հենց առաջին քայլն այն է, որ մենք մեր առօրյա կյանքում մշակենք մեր մեջ ճշմարտացիություն, խոնարհություն, հանդուրժողականություն, սիրառատ բարություն>>:

Մ. Գանդի

<<Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգման կամ դաժան, անմարդկային, իր արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքի ու պատժի>> (Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր):

Այս տեսակետից ելնելով հարկ է նշել, որ մարդու արժանապատվությունը ենթադրում է հարգանք այլ մարդկանց համընդհանուր իրավունքների և պահանջների նկատմամբ: Առավել հաճախ նվաստցման երևույթը հասարակության մեջ հայտնի է <<Բուլինգ>> անվանմամբ /անգլ.Bulling/: Բուլինգը անցանկալի, կռվարար, (բռնարար), անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում: Այն հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է, հատկապես տարածված է դպրոցահասակ երեխաների շրջանում: Ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

: Աշակերտ-աշակերտ կոնֆլիկտների առավել շարքային տեսակները, որոնք երբեմն մտնում են դպրոցական առօրյա կյանք, կապված չեն ուժերի անհավասարակշռության հետ: Ի տարբերություն ավելի սովորական կոնֆլիկտների, դպրոցական բուլինգը կարող է լրջորեն վնասել աշակերտներին:

Երեխաների շեղված վարքագծի խնդիրը չափազանց սուր է մեր հասարակության մեջ: Ամեն տարի ավելանում է այն դպրոցականների թիվը, որոնք փորձում են խափանել դասերը, անպատշաճ վարքագիծ են դրսևորում ուսուցիչների և միմյանց հանդեպ : Այս մանկավարժահոգեբանական խնդրի սերմերը տեսանելի են դեռևս տարրական օղակի երեխաների վարքագծում:

Հետազոտության նպատակը և խնդիրները

• Բացահայտել «բուլինգ» հասկացության էությունը
•Նկարագրել բուլինգի տեսակները
•Ուսումնասիրել բուլինգի դրսևորումները դպրոցում աշակերտ-աշակերտ փոխհարաբերություններում

Հետազոտական հարց
Արդյո՞ք հնարավոր է միջին դպրոցում բացահայտել բուլինգի առկայությունը, կանխել դրա դրսևորումները:

Հետազոտության խնդիրները

.Իրականացնել դասղեկական բաց դասեր բուլինգ թեմայով և կատարել վերլուծություն :
• Իրազեկել աշակերտներին և ուսուցիչներին բուլինգի և նրա տեսակների մասին :
• Կանխարգել և կանխել սաղմնային վիճակում ձևավորվող և դրսևորվող բուլինգը:

Թեմայի արդիականությունը
Ինչպես դարեր շարունակ, այնպես էլ ներկայումս, հասարակության մեջ առանց գիտակցության կամ դիտավորությամբ շարունակվում են կատարվել այնպիսի գործողություններ, որոնք էականորեն բացասական ազդեցություն են ունենում մարդու կյանքի, արժանապատվության գիտակցման ձևավորման վրա, ինչի արդյունքում էլ անընդունելի կերպով ոտնահարվում է անհատի արժանապատվությունը, ժխտվում է խտրականության ենթարկվողի մարդ լինելը, նվազեցվում է անհատ լինելու նշանակությունը, անձը նվաստանում է, ընկնում է ինքնագնահատականը:

Որպես մարդու արժանապատվության ոտնահարման համաշխարհային խնդիր է համարվում նվաստացումը:

Նոյեմբերի 19-ը Երեխաների հանդեպ բռնության կանխարգելման միջազգային օրն է: Ողջ աշխարհում նոյեմբերի 19-ը և 20-ը նշվում են որպես երեխաներին բռնություններից պաշտպանելու և նրանց իրավունքների իրացումն ապահովելու օրեր: Երեխաներին բռնություններից զերծ պահելը պետության և հասարակական ինստիտուտների կարևորագույն խնդիրներից է: Թեպետ Հայաստանում այս թեմայով վերջին լայնածավալ հետազոտությունն արվել է 2016թ.-ին, համաձայն որի մեր երկրում 1-14 տարեկան տասը երեխայից յոթը ենթարկվում են ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, այսօր էլ խնդիրն իր արդիականությունը չի կորցրել: Մտահոգիչ է նաև երեխաների շրջանում «բուլինգ»-ի (հալածանք) ցուցանիշները դեռահասների շրջանում: Հայաստանի 6 մարզերի մի շարք համայնքներում Վորլդ Վիժնի կողմից 2019 թ.-ին իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ 12-18 տարեկան երեխաների 8.7%-ը վերջին մեկ տարվա ընթացքում բուլինգի է ենթարկվել, ընդ որում՝ դա ավելի հաճախ եղել է հենց դպրոցում: Խոցելի ընտանիքներում ապրող երեխաների շրջանում բուլինգն ավելի տարածված է՝ նրանց 12,5%-ն է դառնում բուլինգի զոհ:

Այսօր Հայաստանում և աշխարհում լայն տարածում ունի նաև կիբեր բուլինգը:Այս խնդրի վերաբերյալ իր մտահոգություններն ու հետազոտություններն է հաղորդում նաև ՅՈՒՆԻՍԵՖԸ և Հայաստանում նրա ներկայացուցիչ Տանյա Ռադոչայը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը զգուշացնում է Հայաստանում համացանցի օգտատեր 15–24 տարեկան երիտասարդների առցանց բռնության, կիբեր-բուլիինգի և թվային ոտնձգությունների ենթարկվելու վտանգի մասին և կոչ անում համաձայնեցված գործել կանխարգելելու ու վերջ դնելու երեխաների և երիտասարդների հանդեպ բռնությունը համացանցում:

Ամեն տարի փետրվարի 5_ին՝ անվտանգ համացանցի օրը ՅՈՒՆԻՍԵՖԸ կազմակերպում է հարցում, որին մասնակցում են 160 երկրի ավելի քան 1 մլն երիտասարդներ: Երիտասարդները բովանդակալից պատասխաններ են տվել, թե ինչ պետք է անեն իրենց ծնողները, ուսուցիչները և քաղաքականություն մշակողները երեխաների անվտանգությունը պաշտպանելու համար: Նրանց կարծիքով բուլինգը և կիբեր- բուլինգը կանխարգելող ամենահզոր գործիքներից մեկը բարությունն է: Վերջին տարիներին հոգեբանների մանկավարժների կողմից իրականացվել են մի շարք հետազոտություններ՝ տարբեր տեսակի վարքագծի խանգարումների, այդ

թվում՝ բուլինգի խնդրի ուսումնասիրման, բացահայտման և շտկման վերաբերյալ:Այս հարցին անդրադարձել և շարունակում են անդրառնալ նաև հայտնի կինոռեժիսորներ, հոգեբաններ, ստեղծագործողներ, ինչպես նաև համաշխարհային տարբեր կազմակերպություններ:

Ռեժիսոր Ուվե Բոլի <<Ամերիկայի սիրտը>> **(** Heart of America), 2002 թվականի դրամատիկ ֆիլմը պատմում է դպրոցում հրաձգության հորինված դեպքի մասին: Բուլինգի դրսևորումն է գտել նաև Բրայան Բոֆի <<Ես չեմ ամաչում>> (I'm Not Ashamed) ամերիկյան կենսագրական դրամայում:
Ռուս ուսուցչուհի Սվետլանա Մոտորինայի կողմից լույս է ընծայվել <<**Травля: со взрослыми согласовано>> գիրքը, որը** հրատարակվել է 2021 թվականին և անմիջապես գրավել ընթերցողների ու մասնագետների ուշադրությունը:
Անշուշտ խնդիրը շատ արդիական է, քանի որ հոգեբանական խնդրի հիման վրա ձևավորված վարքագիծը, հետագայում ձևավորում է երեխաների անձնային հատկանիշներն ու որակները : Եթե աչք փակենք այս խնդրի վրա, ապա կրտսեր դպրոցական տարիքի երեխաների վարքագիծը տարիների ընթացքում՝ հատկապես դեռահասության տարիքում, ավելի վտանգավոր վարքագծի դրսևորում կստանա:

ԻՆՉ Է ԲՈՒԼԻՆԳԸ ԵՎ ՆՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բուլինգը անգլերեն բառ է , որը նշամակում է «ահաբեկում»: «Բուլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ նշանակելով «սիրելի» , ապա 1650-ականներին ՝ «թույլերին հալածող» , իսկ 1710 թվականին սահմանում էին որպես «ագրեսիվ, կանխամտածված վարք, խմբի կամ անհատի կողմից, որն ունի կրկնվող բնույթ, և ուղղված է զոհի դեմ, ով չի կարող հեշտությամբ պաշտպանել ինքն իրեն»: Բուլինգի ենթարկվող անձը կոչվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձը՝ բուլեր:
Այն կարող է տեղի ունենալ ցանկացած խմբում, բայց. առավել վտանգավոր է դպրոցականների շրջանում:
Բուլինգը մեր օրերում նոր երևույթ չէ. այն բնորոշ է բոլոր ժամանակներում տարիքային բոլոր փուլերին, միայն թե մեր օրերում այն փոփոխվել է: Ի տարբերություն առօրյա բախումների, բուլինգը պարբերական բնույթ ունեցող, դիմացինին հոգեբանական ու ֆիզիկական վնաս պատճառելու միտում հետապնդող բացասական երևույթն է:

Այն մասին, թե դպրոցում տարեկան քանի երեխա է հասակակցի կողմից բռնության ենթարկվում, Հայաստանում կոնկրետ վիճակագրություն չկա: Թեպետ խնդիրն առկա է, բայց այն հաճախ չի դիտարկվում որպես խնդիր, համարվում է «բնականոն, նորմալ երևույթ», այդ պատճառով էլ հետազոտությունները, որոնք կչափեն բուլինգի տարածվածությունը, բացակայում են: Փոխարենը կան թվեր, թե քանի անչափահաս է բուլինգի ականատես եղել:
Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի 2018 թ. հրապարակած տվյալների՝ աշխարհում 13-15 տարեկան երեխաների գրեթե կեսը՝ շուրջ 150 միլիոն երեխա, դպրոցում կամ դպրոցի տարածքում ենթարկվել է բռնության: 2019 թ. հուլիսի 25-ին Հայաստանում «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ մեկտեղ կազմակերպել է երեխաների մասնակցությամբ «Երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման և արձագանքման գործողությունները» խորագրով քննարկում, որի ընթացքում երեխաները բարձրաձայնել են խնդրի հետ կապված իրենց պատկերացումները, մշակել, ներկայացրել առաջարկություններ և թե ինչ գործողություններ կձեռնարկեն բռնության կանխարգելման, բռնությունից տուժած երեխաներին օգնելու համար՝ կարևորելով պետության, հասարակության, կրթական օջախի արձագանքը երևույթի նկատմամբ:

Բուլինգի տեսակները

•Կիբեր բուլինգ
Կիբեր բուլինգը իրականացվում է սոցիալական ցանցերի(Facebook, Twitter, Instagram), բջջային հեռախոսների, առցանց խաղերի միջոցով: Դա իրականացվում է սոցիալական ցանցերի միջոցով անձնական լուսանկարներ, ձայնագրություններ կամ սուտ տեղեկատվություն տարածելով, ահաբեկող նամակներ ուղարկելով:
•Ֆիզիկական բուլինգ

Ֆիզիկական բուլինգը սեփական մարմնի և ֆիզիկական ակտերի օգտագործումն է՝ հասակակիցների վրա իշխանություն գործադրելու համար: Բռունցքով հարվածելը, ոտքով հարվածելը և այլ ֆիզիկական հարձակումները ֆիզիկական բուլինգի բոլոր տեսակներն են:

•Վերբալ կամ հոգեբանական բուլինգ

Այն իրականացվում է խոսքի միջոցով: Նման դեպքում ծաղրում ,կամ պիտակավորում են զոհին: Բառերը հզոր են: Երբ խոսքը վերաբերում է ահաբեկմանը, երբեմն բանավոր ահաբեկումը կարող է երկարաժամկետ ավելի խորը վերքեր առաջացնել, քան ֆիզիկական ահաբեկումը: Ըստ stopbullying.gov -ի՝ բանավոր ահաբեկման նպատակը զոհին նսեմացնելն է՝ ավելի գերիշխող և հզոր երևալու համար: Սովորական է նաև, երբ բանավոր կռվարարները թիրախավորում են հատուկ կարիքներ ունեցող /ԿԱՊԿՈՒ/ երեխաներին:

• Հարաբերական կամ սոցիալական բուլինգ

Դա անձին հասարակությունից մեկուսացնելը կամ տարանջատելն է, անձի մասին բամբասելը, խմբից վտարելը: Հարաբերական ահաբեկումը կարող է օգտագործվել որպես գործիք կռվարարների կողմից և՛ բարելավելու իրենց սոցիալական դիրքը, և՛ ուրիշներին վերահսկելու համար: Ի տարբերություն ֆիզիկական ահաբեկման, որն ակնհայտ է, հարաբերական ահաբեկումը բացահայտ չէ և կարող է շարունակվել երկար ժամանակ՝ առանց ուշադրության:

• Սեռական բուլինգ

Այն ներառում է սեռական մեկնաբանություններ, ծաղրանքներ և սպառնալիքներ, սեռական բնույթի լուսանկարներ կամ տեսանյութեր ուղարկելով հեռախոսազանգեր կատարելը, սեռական բնույթի տեքստեր, հաղորդագրություններ կամ ֆիլմեր ուղարկելը և այլն:

3. Բուլինգի պատճառները

Բուլինգի հիմնական պատճառներից մեկը որոշակի ընտանեկան դաստիարակությունն է. այն ընտանիքից, որտեղ ուժը համարվում է արժեք (ոչ թե ներքին կամ բարոյական ուժը, այլ բիրտ ֆիզիկական ուժը), որտեղ կին-ամուսին, երեխա-ծնող հարաբերություններում հարցերը լուծվում են ուժով, դուրս են գալիս երեխաներ, որոնք նույնպես հակված են ուժի

դրսևորմանն ու կիրառմանը:
Կարևոր գործոններ են նաև բակն ու միջավայրը, և եթե այստեղ ձևավորում են այսպես կոչված քրեականացված բարքեր, ապա դա նույնպես նպաստում է վերոնշյալ երևույթների առաջացմանը: Հարկ է նշել, որ ինքնին բակը սովորաբար չի դառնում այսպիսի բարքերի պատճառ, քանի որ բակի մթնոլորտը ձևավորվում է որոշակի ընտանիքներում մեծացող երեխաների պահվածքից: Ընտանիքներում շատ մեծ դեր ունի այն, թե ընտանիքի անդամներն ինչ ֆիլմեր են դիտում, արդյոք ծնողները գիրք են կարդում, թե ոչ. այսինքն, ընտանիքի առօրյան անմիջականորեն ազդում է տան մթնոլորտի ու, հետևաբար, երեխաների վրա:



Սովորաբար, սոցիալ-տնտեսական ծանր վիճակ ունեցող երեխաները ենթարկվում են ահաբեկման զոհերի՝ ոտնձգությունների միջոցով միջին խավի կամ հարուստ ընտանիքների իրենց հասակակիցների կողմից:
Ըստ Դ. Օլվեուսի՝ (նորվեգացի գիտնական և ուսուցիչ) բռնության հանդեպ ուժեղ հակում են ունենում այն երեխաները, ովքեր սերում են ոչ լրիվ ընտանիքներից. միայնակ ծնողի կողմից դաստիարակվող երեխան ավելի շատ է հակված հասակակիցների նկատմամբ հուզական բռնություն կիրառելուն: Իշխանատենչ և ավտորիտար ընտանիքներ:
Այն ընտանիքներում, որտեղ մեծահասակները հաճախ են վիճում երեխաների ներկայությամբ, աշխատում է այսպես կոչված ”ուսուցման մոդելը”: Երեխաները
յուրացնում և հետագայում առօրյա կյանքում կիրառում են այդ մոդելը՝ որպես իրավիճակը հաղթահարելու միջոց: Ցածր առաջադիմությունը նույնպես բռնության դրսևորման ռիսկային գործոն է: Անշուշտ բարձր

ինքնագնահատականը և լավ գնահատականներն ուղղակիորեն կապված են իրար հետ: Սա հատկապես կարևոր է աղջիկների համար: Տղաների համար ի տարբերություն աղջիկների, դպրոցական առաջադիմությունն այնքան էլ կարևոր չէ և ավելի քիչ է ներգործում ինքնագնահատականի վրա: Նրանց համար առավել կարևոր են հաջողությունները սպորտում, արտադպրոցական միջոցառումներում, արշավներում և այլն: Այստեղ կարևոր է նշել նաև ուսուցչի գործոնը: Ծնողների հետ մեկտեղ ուսուցիչները նույնպես կարևոր դերակատարում ունեն այս գործընթացում: Ինչպես ռուս հոգեբան Малкина-Пых,-ն է նշում՝ «Եթե ուսուցիչն արտաքին գործոնների ազդեցությամբ երեխաներին դարձնում է ”քավության նոխազ”, ապա նրա արհեստավարժությունը կասկածի տակ է առնվում»:

Երեխային բռնության ենթարկելու նշանները կարող են ներառել՝

- անբացատրելի վնասվածքներ,
- անհանգստության և հետտրավմատիկ սթրեսի ախտանիշներ,
- կորած կամ վնասված հագուստ,
- սննդային վարքագծի փոփոխություն,
- նվազող գնահատականներ,
- շարունակական բացակայություններ դպրոցում,
- ինքնավնասում,
- ինքնասպանության մտքեր:

Նշանները, որ երեխան բուլինգի է ենթարկում ուրիշներին, կարող են ներառել.

- ֆիզիկական կամ բանավոր ծեծկռտուքի մեջ մտնելը,
- ունենալ այնպիսի ընկեր, ով բուլինգի է ենթարկում և լինել խնդրահարույց,
- սովորական գործունեության մեջ գնալով ավելի ագրեսիվ դառնալ

Նշանները, որ երեխան ականատես է եղել բուլինգի, ներառում են՝

- դպրոցական վատ վարքագիծ,
- էմոցիոնալ խանգարում,
- դեպրեսիա,
- հետտրավմատիկ, սթրեսային խանգարում:



5. Գրական ակնարկ

Բուլինգ երևույթի հետազոտության հիմնադիրն արևմտյան հոգեբանության գիտնականներն են՝ Դ. Օլվեուս, Ա.Պիկաս և Պ. Հեյնեմանը: Բացի այդ բուլինգի խնդիրն ուսումնասիրել են նաև բրիտանացի հետազոտողներ Վ. Բեսագն ու Դ. Լեյնը:

Դիտարկենք որոշ պատկերացումներ բուլինգի մասին տարբեր հետազոտություններում**: Դ. Օլվեուսը** բուլինգը հասկանում է, որպես բռնության հատուկ տեսակ, երբ մեկ մարդ (կամ խումբ) ֆիզիկապես հարձակվում է մեկ այլ մարդու կամ խմբի վրա, իսկ վերջինս թույլ է և չի կարող ինքն իրեն պաշտպանել և ֆիզիկապես,և հոգեպես:

Ի.Ն. Կոնան մեկնաբանում է բուլինգն ինչպես վախեցնելու ցանկություն կամ ֆիզիկական ու նաև հուզական ահաբեկչություն՝ զոհի մոտ վախ առաջացնելու և նրան ենթարկեցնելու նպատակով:

Դ.Լեյնը բուլինգ երևույթը հասկանում է որպես ֆիզիկական և հոգեբանական երկարատև բռնություն անձի կամ խմբի կողմից ուրիշ անձի հանդեպ, ով չունի ինքն իրեն պաշտպանելու հնարավորություն:

Ի.Բեռդիշևը բուլինգի ներքո հասկանում է գիտակցված, երկարատև բռնություն՝ ուղղված ինքնապաշտպանության նշաններից զուրկ որոշակի

քանակի մարդկանց:

Վերոնշյալ հեղինակները բուլինգը մեկնաբանում են ինչպես բռնություն,

սակայն բուլինգը ուղղակի բռնություն չէ: Բռնությունն իրենից ներկայացնում է դրա տեսակներից մեկը: Այդ իսկ պատճառով ներկայացվեց ավելի օպտիմալ տարբերակ **Ս. Վ. Կրիվցովայի** կողմից: «Բուլինգ» նշանակում է որոշ երեխաների ագրեսիա մյուս երեխաների նկատմամբ, երբ կան անհավասար ուժեր՝ագրեսոր և զոհ:

Դպրոցական բուլինգի հետազոտության առաջին նմուշը 1905թ.-ին Ֆրանսիայում՝ գիտնական Կ. Դյուկսի աշխատանքներից մեկում է, որտեղ նա հետազոտել է այս ֆենոմենը և իր գիտական հոդվածները հիմք են հանդիսացել եվրոպական մի շարք հետազոտողների աշխատանքներում: Դ.Օլվեուսի, Է. Ռոլանդայի ու ուրիշ գիտնականների շնորհիվ 1978թ.-ին «բուլինգ» հասկացությունը մտավ գիտական ոլորտ:

1969թ.-ին դպրոցական բժիշկ Պ.Հայնեմանը հրապարակեց իր առաջին հոդվածը՝ նվիրված դպրոցում ահաբեկչության երևույթին: 1972թ.-ին լույս ընծայվեց Պ. Խեյցնեմանի առաջին գիրքը, որը կոչվում է **«Մոբբինգ, խմբային բռնությունը երեխաների և մեծահասակների միջև»**՝ հիմնվելով Շվեցարիայի դպրոցներից մեկի բակում կատարվող իրադարձությունների դիտարկման վրա:

Դ. Օլվեուսը անցկացրեց ագրեսիվ երեխաների իր հետազոտությունը: 1973թ.-ին իր հետազոտության հիման վրա հեղինակը հրատարակում է գիրք՝ **«Мальчики для бритья и школьные хулиганы»** վերագրով, որը մեծ ազդեցություն ունենեցավ գիտական համայնքում՝ տարածելով հետաքրքրություն այս երևույթի հանդեպ: Հետազոտողն իր աշխատանքում շեշտ է դնում այդ պրոցեսի մասնակիցների անձնային առանձնահատկությունների վրա: Հեղինակը գալիս է այն մտահանգման, որ զոհի դերը և բուլինգը խորապես անհատական են և կախված են ոչ այնքան խմբային երեւույթներից, այլ ավելի շատ երեխայի սեփական առանձնահատկություններից: Գրքի վերջին գլխում հեղինակը նկարագրում է որոշ հստակ քայլեր բուլինգի դեմ պայքարի համար, որոնք կարող են դառնալ հիմք դպրոցական ագրեսիայի կանխարգելման համար:Վերջին հետազոտություններում,որոնք հրատարակվել են *1980*-ական թվականներին, Օլվեուսը շատ ուշադրություն է դարձրել երեխայի շրջապատի և դպրոցի վրա: Գիտնականը մինչ այդ

ուշադրությունը սևեռել էր դպրոցների տեսակի, սոցիալական միկրոմիջավայրի, հաճախականության, տարածվածության և բուլինգի առաջացման ձևերի վրա:

Բացի այդ, նա շեշտել է զոհի և բուլլերի **անձը**, իրենց համար **ռեֆերենտ խմբերի առանձնահատկությունները,** այսինքն՝ ընտանիք ու մոտիկ շրջապատ: Իրականում իր տեսակետը նրանում, է, որ **երեխային շրջապատող որոշակի բացասական իրավիճակներ խթանում են նրա ագրեսիվությունը** և այդ անձնային գիծը կարևոր **շարժիչ ուժն է** հանդիսանում բուլինգ պրոցեսում, որն ուղղված է ավելի թույլ դասընկերների վրա:

Գիտնականների կողմից մշակված հայեցակարգը ընդունված է համարվում գիտական համայնքում, բայց միաժամանակ ծնում է բազմաթիվ քննարկումներ:1990թ.-ի սկզբում հեղինակը ուշադրություն է սևեռում **կանխարգելող նորմերի** և **պայքար բուլիգնի և հակասոցիալական պահվածքի դեմ նորմերի** վրա, որի արդյունքում հայտնվում է ***«Olweusprogramme»* ծրագիրը*:*** Դ.Օլվեուսը համաշխարհային ընդունված հեղինակություն է բուլինգի և մոբբինգի հարցերում:

Այսպիսով՝գիտական աշխարհում գոյություն ունեն բազմաթիվ կարծիքներ բուլինգի առաջացման, մեխանիզմների և ազդեցության արդյունքների մասին: Սակայն բուլինգի երևույթը մինչ այսօր քիչ է ուսումնասիրված և պահանջում է հիմնարար տեսական հետազոտություններ:

Բաց դասի պլան-վերլուծություն

Թեմա՝	Բուլինգ
Նպատակը՝	. Իրազեկել ուսուցիչներին և աշակերտներին բուլինգի ծագման, դրսևորման և կանխարգելման մասին . Բարձրացնել նրանց իրազեկվածությունը
Խնդիրները՝	. Բացահայտել աշակերտների շրջանում բուլինգի ընկալումները, բացահայտել , թե որքանով են նրանք տեղյակ . Բացահայտել և վեր հանել դպրոցում բուլինգի առկայությունը և դրսևորումները

Վերջնարդյունք	• Հստակ կիմանան ինչ է բուլինգը • Կիմանան բուլինգի տեսակները և կտարբերակեն դրանք • Կմշակեն ռազմավարություն և ձեռք կբերեն բավարար գիտելիքներ բուլինգի դեմ պայքարում • Կբացահայտեն առկա բուլինգի դրսևորումները հասարակության մեջ

Ես իրականացրի դասղեկի բաց դաս-քննարկում, որին ներկա էին մանկավարժներ և 7-12-րդ դասարանի աշակերտներ: Նպատակս էր նրանց իրազեկել բուլինգի ծագման, դրսևորման, տեսակների և ամենակարևորն է՝ կանխարգելման և բացահայտման մասին:

Դասը սկսեցի փոքրիկ տեսանյութով, որն իր մեջ պարունակում էր մի քանի կարևոր խորհուրդներ : Այնուհետև ներկայացրի, թե ինչ է բուլինգը, երբ է այն սկզբնավորվել , ինչ դրսևորում է ունեցել, ինչ ճանապարհ է անցել : Ներկայացրի բուլինգի տեսակները, դրանց դրսևորումները դպրոցում, հասարակության մեջ:

Ներկայացրի թե ովքեր կարող են դառնալ բուլինգի զոհ, և ովքեր՝ բուլեր: Այս փուլում կատարեցի քննարկում մանկավարժների հետ, հետևյալ հարցադրմամբ՝

.

<<Ձեր աշխատանքային գործունեության ընթացքում բուլինգի, որ տեսակին եք բախվել >>: Քննարկումից հետո 8-րդ դասարանի մի քանի աշակերտներ հանդես եկան բեմականացմամբ:

Բեմականացման մեջ պայմանական բուլերները բուլինգի էին ենթարկում ակնոց կրող մի աշակերտի: Որից հետո հարց ուղղվեց նրանց, թե ինչ հոգեվիճակում էին գտնվում այդ դերը ստանձնելով: Աշակերտները շատ ազնիվ, նուրբ և իրատեսական պատասխաններ հնչեցրին : Դերային խաղից հետո հարց ուղղվեց

մասնակից և հանդիսատես աշակերտներին, թե բուլինգի, որ տեսակն էր առկա այդ պատմության մեջ: Նրանք իրենց պատասխանը քննարկելուց հետո հայտնեցին և կազմակերպվեց համընդհանուր քննարկում:

Վերջում բաժանվեցին թեստ-հարցաթերթիկներ մանկավարժներին և աշակերտներին, որոնք պետք է լրացվեին անանուն: Թեստի մեջ կար հարցադրում, թե ինչ կփոխեին աշակերտները դպրոցում. այստեղ աշակերտները հանդես էին եկել հետաքրքիր նախաձեռնություններով, որոնք նոր միջոցառումների և քննարկումների սկիզբ են հանդիսանալու:

Վերլուծելով թեստի արդյունքները, պարզեցի, որ մեր դպրոցում ,,,,,,,,,,,,,,,,,,



Բուլինգ թեմայով 2 դասաժամ եմ իրականացրել 8-րդ դասարանում : Առաջին դասաժամին աշակերտները լրացրին թեստ-հարցաթերթիկ, իսկ երկրորդ դասաժամին կազմակերպեցինք բանավեճ- քննարկում՝ «Ինչ ազդեցություն է թողնում բուլինգն աշակերտի հոգեբանության և զարգացման վրա « թեմայով: Քննարկման արդյունքում աշակերտները հանգեցին այն մտքին, որ եթե ժամանակին չկանխենք այդ արատավոր երևույթը, ապա մենք կունենանք «հիվանդ հասարակություն», որի անդամները ձեռք կբերեն .

- Խաթարված հոգեբանություն ,
- ցածր ինքնագնահատական,
- ինքնահարգանքի բացակայություն,
- դեպրեսիվ հոգեվիճակներ:



Իմ կատարած հետազոտության արդյունքնում ես բացահայտեցի, որ ութերորդ դասարանում առկա էր կոնֆլիկտ, որն աստիճանաբար կարող էր վերածվել հոգեբանական և վերբալ բուլինգի:

Իրավիճակն այսպիսին էր. մի քանի տղաներ փորձում էին բուլինգի ենթարկել իրենց համադասարանցի տղային, որն ունի մյուսների համեմատ ավելի բարձր առաջադիմություն , գիտության և նորագույն տեխնիկայի նկատմամբ հետաքրքրվածություն: Սակայն ես զգալով այդ ամենը կանխեցի այդ::
Դասաժամին խմբային աշխատանք հանձարարման ժամանակ նրանց ներառում եմ նույն խմբում:
Այս ընթացքում մենք ունեցանք նաև դասարանական խնջույք, որը նույնպես օգտագործեցի նրանց շփումը սերտացնելու նպատակով: Ըստ իս, այս կատարված կանխարգելման քայլերով ես կանխեցի մի նոր հասունացող բուլինգ:
Այժմ նրանք ունենում են սերտ շփումներ ոչ միայն դասերի ընթացքում ու դպրոցում, այլ նաև դպրոցի սահմաններից դուրս, միասին հաճախում են նաև սպորտային խմբակի: Իրենք հասկացան, որ կյանքում շատ ավելի կարևոր է կրթությունն ու գիտելիքը:

Եզրակացություն

Շատ հաճախ երեխաներից շատերը կյանքի ինչ-որ փուլում ենթարկվում են բուլինգի: Կկրի դա շարունակական բնույթ, թե՝ ոչ, մեծ մասամբ կախված է երեխայի արձագանքից: Որքան ավելի բուռն ու անհավասարակշիռ լինի երեխայի արձագանքը, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ բուլինգի ենթարկողը կշարունակի իր գործողությունները: Հետևաբար բուլինգի կանխարգելման համար լավագույն միջոցը առողջ մթնոլորտում ուժեղ կամքով, ինքնավստահ, հավասարակշռված ու պինդ հոգեբանությամբ երեխա դաստիարակելն է: Պետք է գիտակցել, որ մի խնդիր լուծելով՝ կարևոր է նոր խնդիրներ չստեղծել:

Մանկավարժությունը ունի մի շատ կարևոր սկզբունք՝ երեխան սովորում է, երբ դժվարություններ է հաղթահարում, ավելորդ աջակցությունը վնասակար է երեխայի զարգացման համար: Ե՛վ մանկավարժները, և՛ ծնողները պետք է դա քաջ գիտակցեն և միջամտեն միայն այն պահերին, երբ բացահայտ է, որ առանց իրենց աջակցության խնդիրը չի

լուծվելու: Միջամտելիս դարձյալ վստահեն երեխաներին և հնարավորություն տան նրանց մտածել, գործել և լուծել խնդիրները ինքնուրույն:Եթե մենք՝ մանկավարժներս , կրթենք երեխաներին այնպես, որ առաջինն իրենք գիտակցեն իրենց կարևոր դերը կյանքում , գնահատեն իրենց կարողությունները, ապա երեխաները կդառնան ավելի պաշտպանված:Ցանկացած երեխայի պետք է օգնենք բացահայտել իր կարողությունները:

Ես համոզվել եմ մի բանում, որ եթե մեծերը(ուսուցիչ , ծնող) վստահում են իրենց երեխային, օգնում են բացահայտել սեփական կարողությունները, լավ օրինակ են հանդիսանում մարդկային փոխհարաբերություններում , ապա երեխան մեծանում է հավասարակշիռ, հաստատական քայլերի ընդունակ և բարոյական:

Առաջարկություն

Այսպիսով, հետազոտության արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա, ներկայացնում եմ դպրոցական միջավայրում բուլինգի կանխարգելման հետևյալ առաջարկները.

- .Տարվա ընթացքում կազմակերպել անանուն հարցումներ դպրոցի տարբեր տարիքային խմբերի աշակերտների համար :
- .Պարբերաբար կազմակերպել անմիջական քննարկումներ տնօրենության, հետ
- Անցկացնել կլոր սեղաններ ուսուցիչների և աշակերտների միջև, ապահովել նաև հոգեբանի ներկայությունը:

Խորհուրդներ մեծահասակներին

- Ագրեսիվ երեխայի վարքագիծը վերլուծելիս կենտրոնացեք նրանց գործողությունների, այլ ոչ թե անձերի վրա, այսինքն՝ խոսեք վատ վարքագծի մասին, և ոչ թե՝ վատ սովորողների,
- Վերահսկեք ձեր բացասական հույզերը և նույնը սովորեցրեք նաև երեխաներին:

•Խուսափեք երեխայի մոտ բարոյականության մասին խոսելուց և վարքագծի մասին դասախոսություններից: Մի՛ մեղադրեք, մի՛ խայտառակեք երեխային, ուղղակի քննարկեք նրա կողմից դրսևորված ագրեսիան :

• Ձանք գործադրեք երեխա-բուլլերի դրական համբավը պահպանելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Evans and Smokowski (2016) Child and Adolescent Social Work Jwurnal33(4)
2. Olweus, D. Bullying at school: What we know and what we can do. Malden, MA: Blackwell Publishing (1993)
3. Дахин А. Н., Буллинг в школе и не только…, Сибирский педагогический журнал, N6, 2015, էջ 208:
4. Малкина-Пых И.Г. Психология поведения жертвы. Справочник практического психолога. М.: Эксмо, 2006. 1006 с.

Էլեկտրոնային հղումներ

1. https://antibullyingalliance.org.uk/sites/default/files/uploads/attachments/10%20Key%20Principles%20to%20reducing%20and%20responding%20to%20bullying%20-%202021.pdf
2. unicef.org/armenia
3. https://anti-bullyingalliance.org.uk/tools-information/all-about-bullying/sexual-andsexist-bullying/what-sexual-and-sexist-bullying
4. https://antibullyingsoftware.com/what-is-the-definition-of-relational-bullying-socialbullying/
5. https://uic.am/9725
6. https://www.stopbullying.gov/
7. https://www.stopbullying.gov/resources/research-resources/consequences-of-bullying
8. https://antibullyingsoftware.com/what-is-the-definition-of-physical-bullying/